

**ՀՀ Արմավիրի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան)  
հայտարարում է մրցույթ՝ Մարզպետարանի աշխատակազմում  
քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոններն  
զբաղեցնելու համար**

**Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի  
առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 63-3.3-6)**

Բաժնի պետի հանձնարարությամբ ստուգում է Հայաստանի  
Հանրապետության քաղաքացի երեխա որդեգրելու համար դիմած  
Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից ներկայացված  
փաստաթղթերի ճշտությունը, իրականացնում է բժշկական  
մասնագիտական աշխատանք: Խնամակալության և հոգաբարձության  
մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում է առանց  
ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի  
մնացած երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման  
մատյանները և ձևավորում է տվյալ մարզի տարածքում բնակվող, առանց  
ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների տարածքային  
շտեմարանը և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին  
պատկանող անձանց տվյալների տարածքային շտեմարանը:  
Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ  
լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

\* առողջապահություն մասնագիտությունների գծով բարձրագույն  
կրթություն,

\* քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային  
ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին  
երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ  
Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների  
տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների,  
օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական  
պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ  
առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ  
պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա  
աշխատանքային ստաժ,

\* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր  
լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ

իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

\* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

\* անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Մրցույթը կկայանա 06.06.2013թ.՝ ժամը 1400-ին, Մարզպետարանի շենքում (ք. Արմավիր, Աբովյան 71):

\*\*\*

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

\* դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

\* տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

\* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

\* մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

\* անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 930-ից մինչև 1230-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

*Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 08.05.2013թ.:*